

ՔՆՆԾԴԵՑՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՑԵՆԾԽԾՈՒԹԻՒՆ

Ս. Վ. Արդութեան-Երկայնաբազուկ, «Մանկական պարտեզ», ձեռնարկ մայրերի և դաստիարակչունիների համար, նոտաներով և նկարներով: Թիֆլիս,
1905, զինը 3 ռ.

Մեր շնորհալի մանկապարտիզանուած այս ընտիր երկը
նշանակալից ժամանակ է մտնում մեր աղքատիկ մանկավար-
ժական աշխարհը: Այն, մեր մանկավարժական գրականութիւնը
համարեա թէ չքաւորութեան աստիճանի է հասած: Հիւսիսային
դառնաշունչ քամին փչեց ու բնքոյշ բողբոջները մի ակնթար-
թում գետին տապալեց... Տիկին Արդութեանի «Մանկապարտէ-
զը» հիմայ, մեր կրթական գործի վերածնութեան խորհրդաւոր
օրերում գալիս է մեր ժողովրդի կրթութեանը մի կարեւոր նպաստ
մատուցանելու: Չափազանց մեծ պահանջ էր զգացւում մի այս-
պիսի ձեռնարկի, որ հնարաւորութիւն տար հայ ընտանիքին իր
զաւակներին մայրենի լեզուով դաստիարակելու:*) Այս նպատակին
աւելի կարծ ճանապարհով համնելու համար տիկին հեղինակը մի
պարտականութիւն էլ զգացել էր, այն է՝ պարտիզանուհիների
դասընթացներ կազմակերպելլ մթքօբելեան գաղափարները գոր-
ծադրողներ նախապատրաստելու համար: Ավաստ որ արիւնուո օրեւ-
ռը այս գեղեցիկ դիտաւորութիւնն էլ յետաձգեցին: Այժմ մենք
ունենք չափազանց շատ օրիորդներ միջնակարգ ուսումով, որոնք
այդ դասընթացն անցնելով կարող էին ընտանիքներում մանկա-
կան խմբակներ կազմել և այս գեղեցիկ զրադունքով թէ օգտա-
կար լինել և թէ ինքնուրոյն գործունէութիւն ունենալ:

Ուղիղ է և համակրելի հեղինակի այն ըմբռնումը, որ
մանկապարտէզը իսկապէս մեծ ընտանիք է և եթէ այն կատա-

*) Այս պահանջը ես իբրև մանկավարժ ու հայր զգալով չորս տարի
տառաջ պատրաստեցի մի «Մանկապարտէզն ընտանիքում» խորագրով ձեռ-
նարկի: Նիւթական միջոցի բացակայութեան պատճեռով այս էլ զատպար-
տուեց ծալուած մնալու Այդ գրքի ներածութիւնովը, որ լոյս տեսաւ Շաս-
կերի 1-4 համարներում մանկական խաղի ու աշխատանքի իմաստն ու
խորհունդը հարցանէր ծնողներին պարզելու համար: Ուրախ եմ որ այս
գործը ձեռնհաս մարդ յաջողցրեց:

բում է այդ գերը, ուրեմն կանգնած է ուղիղ ճանապարհի վրայ։ Այս հաստատութիւնը ունեցել է և ունի հակառակ հոսանքներ իսկապէս այն պատճառով, որ նրա հետևորդներից շատերը տառացի հասկանալովն ըստ գաղափարները, կոյք պահպանողականութեամբ ընթանալով միացրել են մակապարտէզի թարմ ոգին և մանկական անկելանոցի են վերածել այդ համակրելի հաստատութիւնը։ Առողջ մանուկը արթուն ժամանակ շարունակ խաղում ու պարապում է։ Պէտք էր դիտել ու հասկանալ այդ զբաղմունքների ոգին ու խորհուրդը և կաղմակերպել աւելի նպատակայարմար խաղ ու պարապմունք՝ մանկական կեանքի այդ նշանակալից օրերը պատահականութեան չդատապարտելու համար։ Եւ այս մեծ գործը կատարեց մանկասէր Ֆրէօբելը։ Նա ասում է. «Ես վերադարձնում եմ մանուկներին այն, ինչ որ նրանցից առել եմ», այսինքն՝ իր ամբողջ սիստեմը նա հիմնել է իր արած դիտողութեանց վրայ։ Մանկապարտէզի բուն աղբիւրը ուրեմն հարազատ է և վճիտ, պղտորողները նրան չհասկացողներ են։

Ֆրէօբելի բանիմաց հետևորդները հետզհէտէ թարմացնում են մանկապարտէզը գրականութիւնից, գեղարուեստից ու բնութիւնից առած նորանոր նիւթերով և վարպետի մտքից չանցած տարրերով ճոխացնում են այս խորհրդաւոր հաստատութիւնը։

Ֆրէօբելի հիմնական գաղափարն այն է, որ մանուկը իր խաղակերպ գործունէութեամբ արտայայտում է մարդկութեան կուլտուրական նախնական ընթացքը։ Մանկական խաղերն ու պարապմունքները մարդկութեան կուլտուրական ճիգերի ազատ ու համառօտ վերաբարապրութիւնն են ներկայացնում։ Ահա այս ելակէտից պէտք է մենք մօտենանք Ֆրէօբելի սիստեմի գնահատութեանը, մի կողմ թողնելով նրա բնազանցական-հոգեբանական բացատրութիւնները, որոնց հոգեբանական հիմունքը սակայն, հակադրութեան թէօրեան, այնքան էլ խախուտ չէ, որքան կարծում է հեղինակը։ Առարկաների նման ու հակադիր յատկութեան շորհիւ է, որ մենք կարողանում ենք ըմբռնել նրանց էութիւնը, եթէ ոչ նրանցից մեր ստացած տպաւրութիւնները մշուշապատ կը մնային։

Արդ՝ զարով մանկապարտէզի նիւթերի սիստեմն՝ ես նոյն պէս ընդդէմ լինելով մեքենայական դասաւորութեանը՝ չեմ կարող սակայն համաձայնուել հեղինակի հետ, եթք նա բոլորովին ընդդէմ է զբաղմունքների բնական դասաւորութեանը։ Այս, կարելի չէ, որ մանուկը իր կեանքում դրուած լինէր այնպիսի պայմանների մէջ, որ նրա աճման հետ միասին նրա վրայ աղդող առարկաները հետևողաբար ընթանային պարզից դէպի

բարդը, բայց և այնպէս՝ ուսուցման գործում այդ տպաւորութիւնների ընթացքը մենք չենք կարող պատահականութեան թողնել: Մանուկը կեանքից բերում է հումնիւթեր, իսկ մենք պարտական ենք այդ նիւթերը մշակել հոգեբանական ցուցմունքներին համապատասխան: Եւելի պարզ կը լինէր այս սիստեմը մանաւանդ ոչ մասնագէտ մայրերի համար, եթէ տեխնիքական խաղերի ու պարապմունքների նիւթերը ըստ հասակների որոշ գրուպաների վերածուէին՝ կուտարական պատմական ընթացքը ուղղեցոյց ընդունելով: Ամենից փոքրիկների համար այդ պարապմունքներից կը նշանակուէին նախ առանց գործիքների ձեռագործները, ապա հետզհետէ գործիքների պարապմունքները: Իսկ ինչ վերաբերում է տեխնիքական խաղերին՝ պէտք է բնորոշուէին նրանց մէջ երեք տարրեր՝ ըմբռոնողութիւնը զարգացնող ձեւը, ճաշակը զարգացնող ձեւը և գործնական կեանքից (արհեստից ու արուեստից) վեր առած ձեւը և ըստ այնմ այս նիւթերի համախմբման վերաբերեալ ցուցմունքների արուէին:*)

Հեղինակի շարժական խաղերին վերաբերեալ հայեացակէտը պարզ չէ. մի տեղ (141 եր.) նա գրում է. «Մրսորդ խաղացող մանուկը տարւում է խաղով, ինքն իրան սոռանում է. նա մանուկ չէ, որ ներկայացում է որսորդ, այլ իրօք իրան երևակայում է հասակաւոր որսորդ: Շարժական խաղերը իրանց սիւծէտը պիտի վերցնեն մարդու միայն ֆիզիքական յատկութիւններից և բնութիւնից և տակաւին չօշափեն մտքեր ու զգացումներ»: Եւ 143 երեսում՝ «Մանուկն ունի անդիմադրելի ձրգտում—նմանուել ամեն բանի, ամեն ինչ վերածել դրամայի:» Ուրեմն ինչպէս կարելի է այս խաղերում չօշափիել մնցեր ու զգացմուներ: Ո՞չ, մանուկը նոյնիսկ անշունչ առարկաներին մտքեր ու զգացմունքներ է վերագրում և նրանց հետ յարաբերութեան մէջ է մտնում նա՝ կարեկցութեան, խնդակցութեան ու ընկերական սիրոյ զգացմունքներով:

Հեղինակի որոշ չափով ազատ վերաբերմունքը վարպետի

*) Ուշադրութեան արժան է իտալական մանկապարտէզի ողին՝ զգայանքներու ճաշակը զարգացնելու առանձին շեշտով՝ տեսողութեան համար խառնում են թափանցիկ փորձանակների մէջ դոյնզզոյն հեղուկներ, մանկապարտէզի բոլոր առարկաները ծիածանի պէս երփներանգ են, ուղութիւնները որոշելու համար առանձին վարժութիւններ ունեն: Լսողութեան համար փորձեր են անում բաժակների, զանգակների հնչմաների վրայ: Շօշափելը զարգացնելու համար խոռոշ աշքերով իրերի ձեւերը, մեծութիւնը ուրոշել են տալիս, ծանրութիւնը, ջերմութիւնը համեմատել տալիս: Հոտհոտելքը վարժեցնում են համեմունքով, նոյնը ճաշակը:

սիստեմի գործադրութեանը համակրելի է, օրինակ՝ գոյները նացոյց է պալիս փոխանակ գնդակների՝ բնական ծաղիկների վրայ, բայց երբ նա երորդ նուէրը փոխանակ 8 խորանարդից՝ 10 ից է բաղադրում, այդ՝ ըստ իսկ՝ սխալ ընթացք է: Թուարանութեան համար 10 առարկայ միւս խաղերն էլ կը ներկայացնեն (առանձին էլ պէտք չկայ ոչ միայն շտապելու, այլ փոքր-ներին 10 հաշիւը սովորեցնելու): բանն այն է, որ այդ 8 խորանարդները առաջանում են մի մեծ խորանարդից Յ հատուածով: անալիզի եւ սինթեզի գաղափարներն են իսկապէս, որ այստեղ ինկատի պէտք է առնուին:

Հնդհանրապէս ասած՝ հեղինակի ընտրած տեխնիքական խաղերի ու պարագաների նիւթերը ճոխ ու բազմակողմանի են, բայց պակասում են այլ ձեռնարկներում ընդունուած կոր ձեռով փայտէ մարմինները շինութեան համար, թելով, աղեղներով (մետաղեայ) ու ջոխիներով խաղերը: Կարևոր էին նաև ցուցմունքներ հիւսելու և թուղթ ծալելու գարժութեան համար. ամեն մարդ այդ բաները չի իմանալ:

Նկարչութեան վերաբերմամբ դիտողութիւնն այն է, որ աւելի լաւ կը լինէր «մանկական նկարչութիւնից» սկսել, այն բաներից ամերիկական միթողով, որ նրանց զբաղեցրել են ընտանիքում՝ կենդանիների ու այլ առարկաների մի քանի գծերով բնորոշելով: Մանկական աշխարհին այս սիրելի նկարչութեան ձեռնարկ կայ արդէն: Հեղինակի մանկապարտէզում գործադրում է այս: *)

«Պատմութիւններին» վերաբերեալ խորհրդածութեան մէջ հեղինակը թէև ուղիղ հայեցակէտ ունի հէքիաթների նկատմամբ, սակայն իսկական մանկական հէքիաթներ նա չէ տուել: Ցիշում է ի միջի այլոց Աղասեանցի հէքիաթները, բայց օրինակ՝ ոչ Պախրատարը, ոչ Եղիգնուհին, Ուլիկները... չեն մտած այդ պատմութեանց շարքը: Կենդանիների կեանքից վեր առածների մէջ կան բաւականին թուով ընտիրներ, բայց և մասամբ ձգձուածներ ու քիչ արժէք ունեցողներ:

Ուրախալի է, որ Մ'արշ եւ երգեր հատուածում տեղ ընկել են նաև մեր անգիր ու գրաւոր բանահիւսութիւնից նիւթեր թարգմանականների հետ: Այս նիւթերից Ան Յ, 5, 20, 25, 27 կամ իբրև այս հասակին անհամապատասխան կամ շատ տենդենցիօգ կարելի էր դուրս թողնել:

*) Տես այս մասին եանժուլի գրուածքը:

Մին էլ ըստ իս լաւ կը լինէր քարետախտակները ուղղահանաց պահել տալ, այս գիրքով ջզրութիւնը նախապարաստելու համար:

Այս ձեռնարկի ամենասիրուն զարդն է բանահիւսական բաժնութեալ երգեր շարժական խաղերով հատուածը: Այս տեսակի խաղերը մանուկների սրտից բղխած, մանկական սրտով սիրած խաղերն են: Մարդկանց, կենդանիների ու թռչունների կեանքից փնջուած այս չքնաղ, գունագեղ երևոյթները իսկ որ կարող են չնորհալի պարտիզանունու ձեռքում մանկապարտէզը իսկական գրախտի փոխարկել, մանուկների համար անմուանալի օրերով լցնել նրանց կեանքի այս արագասահ երջանիկ լըջանը: Այս հատուածի մէջ թագաւորում է բուն ժողովրդական մանկական բանահիւսական ոգին, որին այնպէս սիրուն, այնքան անուշ, գողտրիկ արտայայտութիւն է տուել մեր անզուգական Աղյահեանցը:

Ապա գալիս է պարերգերի, փոքր հատուածը, որի մէջ դարձեալ մեր բուն ժողովրդական մոտիւնները և այս մոտիւններով բանահիւսածներն են համով-հոտով:

Վերջապէս՝ տեղ են բռնում խաղերն առանց՝ երգերի՝ մեր սայրական տան դասերը՝ իբրև մշակուած՝ արտայայտութիւններ մակական գողտրիկ թոթովանքի:

Այս գրքին յաւելուածի ձևով կցուած են 72 հատ եւրոպական նիշերով ձայնագրուած մանկական երգեր, սրոնք անշուշտ շատ կը նպաստեն այս գեղեցիկ եղանակների ներմուծմանը մեր ընտանիքներում:

Ասելիքս երկարացաւ, ուստի հարկ կը լինի մնացած խընդիրների մասին միայն մի քանի դիտողութիւններ անելով բաւականանալ. պատժել փոքրիկներին սիրած զբաղմունքներից զրկելով հակամանկավարժական միջոց է: Արդ տողերը թերևս պատահարար սպրտած են և հեղինակի մանկապարտէզի դաստիարակչական սիստեմի հետ կապ չունին: Ֆրէօբելը հակառակ էր պատիմներին: Դորձածում են օտարազգի դժուար բառեր դասաւանդութեան մէջ: Կան մի քանի տեղ շփոթած բառեր՝ թեք, ուղղահայեաց, կոր գծեր միկնոյն բանը չեն: Դասաւանդութեան լիզուն աւելի պէտք է մշակել, որպէսզի բոլորվին զուտ մանկական դառնայ: Պատկերների միջոցով կարելի չէ երկրագնդի, գլորուսի, ծովի և այլն մասին դադախար տալ և պէտք էլ չկայ այս հասակում: Ինչնու ուր հնարաւորութիւն կայ, ամեն մի մանկան առանձին առանձին մարդեր չտալ ցանել-խնամելու համար: Կենդանիներ խնամելու պէտքն էլ կարենոր էր վեր հանել:

Ահա տիկ. Արդութեանի «Մանկական պարտէզի» համառոտ նկարագիրը, որ աւարտելուց յետոյ ձեզ եմ դիմում, հայ մայրեր, զրկեցէք ձեր ընտանիքը մի այլ բանից և ձեռք բե-

ըէք այս ընտիր գիրքը, ձեր մանուկների երջանկութեան աղբիւրներից մին: Բայց ափսոս, որ «Մանկական պարտէզը» մեծածախք գիրք լինելով՝ մատչելի չպիտի լինի հէնց այն հայ մայրերից շատ շատերին, որոնք որ բուռն ցանկութիւն կ'ունենային այն ձեռք բերելու իրանց սիրասուն զաւակների համար: Գոնէ բազմաթիւ ընտանեկան մանկապարտէզներ կազմակերպուէին:

Այս ձեռնարկը գործածելու համար պիտոյքները շինել տաւլը կամ ձեռք բերելը դժուարութեան կը հանդիպէր: Ցանկալի էր որ մէկը ձեռնարկէր էժանագին ժողովածուների պատրաստութեանը: ¹⁾

Յ. ՏԵՐ-ՄԻՐԱՔՆԱՅԻ

Die Verfassung des persischen Staates. (Պարսկաստանի պետական կազմը).
Berlin, 1904, von Dr James Greenfield.

Այս ստուար գիրքը իր տեսակի մէջ միջազգային իրաւունքի պատմութեան էջերում իր աեղն է գրաւում. առաւել ևս գերմանական գրականութեան մէջ, ուր անգլիականի ու ֆրանսիականի համեմատութեամբ այնքան քիչ բան կայ նուիրուած Պարսկաստանի բաղաքական և տնտեսական կեանքի ուսումնասիրութեանը:

Այս աշխատութեան մեծ առաւելութիւնը կայանում է նըրանու մ որ հեղինակը ծանօթ լինելով թէ արևելեան և թէ արևմտեան լեզուներին, ձեռքի տակ է ունեցել մինչև այժմ այդ մասին լոյս տեսած գրեթէ բոլոր աչքի ընկնող աղբիւրները. մասնագէտի համբերատարութեամբ կարդացել է Շարդէնի, Ժուրդէնի, Մալքումի և այլոց միծահատոր աշխատութիւնները, Կըրզընի ճանապարհորդական սրամիտ դիտողութիւնները, հայկական և պարսկական գրաւոր աղբիւրները և քաղել այդ բոլորից կարենոր եղածը կարճ ու ամփոփ կերպով: Ապա որ-

¹⁾) Այս առիթով այցելեցի հեղինակի մանկապարտէզը՝ ձեռնարկում արտայայտուած զաղափարնեցի գործազրութիւնը իրականութեան մէջ տեսնելու համար: Տպաւորութիւններս գեղեցիկ էին Մանուկների խաղերի ու պարագանքների մէջ ես տեսայ աշխոյժ ինքնուրոյնութիւնները: Ափսոս որ գոտ հայկական մանկապարտէզ չունենք: Այս առիթով տեղեկացայ, որ տիկինն ինքը պատրաստել է պիտոյքներ, որոնց ամբողջ ժողովածուն սակայն շատ անմատչելի կը լինէր ծնողների մնձամասնութեան: Ուստի առջարկեցի ամեն մի հասակի համար առանձին ժողովածու կազմել: